

Ճգնաժամի ժամանակ ընտանիքի հետ աշխատանքի տարբեր մոտեցումներ

Ճգնաժամային միջամտության ոչ մի մոտեցում չի կարող բոլոր դեպքերում աշխատել բացարձակ արդյունավետությամբ: Հակիրճ անդրադառնանք մի քանի տարածված մոտեցումների:

⇒ **Համայնքային համակարգ կամ համայնքային ռեսուրսների կիրառում**

Այս մոտեցման մեջ ճգնաժամի հաղթահարման համար առաջնային կարևորություն է տրվում բոլոր հասանելի հասարակական կազմակերպությունների ու ռեսուրսների (իրավաբանական, սոցիալական, առողջապահական, կամավորական, եկեղեցական և այլն) համակարգմանը: Ուշադրության կենտրոնում է գտնվում ընտանիքի փոխազդեցությունը շրջապատող միջավայրի հետ: Ճգնաժամային միջամտություն իրականացնող անձը հոգ է տանում այն մասին, որ ընտանիքը կարողանա լիարժեք օգտվել համայնքում գործող բոլոր ծառայություններից ու հնարավորություններից:

⇒ **Բազմակի ազդեցություն կամ բազմամոդալ մոտեցում**

Այս մոտեցման մեջ կարևորվում է մեծ թիմի աշխատանքը, որում ներգրավված են հատուկ պատրաստվածություն ունեցող տարբեր մասնագետներ: Միաժամանակ այդ մասնագետները համագործակցում են պետական և հասարակական կառույցների հետ: Սկզբնական շրջանում ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ առանձին աշխատում է համապատասխան մասնագետ: Այնուհետև բոլոր մասնագետներն ու ընտանիքի անդամները հավաքվում են միասին, և յուրաքանչյուր ընտանիքի անդամի կարծիքն ու մոտեցումը, տեղի ունեցողի ընկալումը ներկայացնում է իր հետ աշխատած մասնագետը: Այս գործընթացը կարող է մի քանի ժամ տևել, քանի որ խրախուսվում է, որ ընտանիքի անդամներն ասեն, թե ինչ են զգում, էլ ինչ են ցանկանում հստակեցնել, ինչի վրա են ցանկանում աշխատել ապագայում և այլն: Այս փուլից հետո ընտանիքի հետ աշխատանքը կարող է շարունակել մեկ խորհրդատու, որը տիրապետում է մյուս մասնագետների կողմից ստացված տեղեկություններին:

⇒ **Կոգնիտիվ բիհեյվիորիստական կամ ռացիոնալ-էմոտիվ մոտեցում**

Համաձայն այս մոտեցման համարվում է, որ ճգնաժամի մեջ գտնվող ընտանիքի անդամներն ունեն իռացիոնալ, ոչ հարմարողական համոզմունքներ ու դիրքորոշումներ, որոնք վերակառուցման կարիք ունեն: Լսելով ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին՝ այս մոտեցմամբ աշխատող մասնագետը փորձում է վերհանել անցանկալի վարքը հրահրող իրադարձությունը, նախադրյալները: Առաջարկվում են վարքի նոր տարբերակներ, որոնց կիրառման վերաբերյալ ընտանիքի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվում: Դրական արդյունքները ամրապնդվում են խրախուսանքով (օրինակ՝ ընտանեկան զբոսանք կամ անվճար սնունդ), իսկ բացասական արդյունքների դեպքում կիրառվում է համապատասխան հետևանք: Թե խրախուսանքը, թե հետևանքի կիրառումն իրականացվում է խիստ հետևողական կերպով:

☞ Առաջադրանքի վրա կենտրոնացված մոտեցում

Այս մոտեցման կիրառման պարագայում ընտանիքի հետ ձևակերպվում են «պայմանագրեր», պլանավորվում են կոնկրետ առաջադրանքներ, կիրառվում են խրախուսանքներ: Օգտագործվում են նաև տնային հանձնարարություններ, որոնք օգնում են ընտանիքի անդամներին մարզել միմյանց հետ հաղորդակցման ու խնդիրների լուծման հմտությունները ճգնաժամային միջամտություն ցուցաբերող անձի հետ հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածում: Ըստ հետազոտությունների՝ այս մոտեցումը մեծ հաջողություններ է գրանցել ընտանիքի անկախացման և առանց բռնության վարքի ձևավորման հարցերում:

☞ Ընտանիքի ապաքինման մոտեցում

Այս մոտեցումը կիրառելիս խորհրդատուն նպաստում է այնպիսի իրավիճակների դրսևորմանը, որոնք արտացոլում են ընտանեկան փոխազդեցություններն ու գործառույթները: Այնուհետև ներգրավվում են ընտանիքի առավել ազդեցիկ անդամները: Գնաժամի պատճառների վերհանման հարցում մեծ ուշադրություն է դարձվում ընտանիքի համակարգին, դրանում առկա դերերին, ընտանեկան գաղտնիքներին, միջերին, հաղորդակցման պատերներին: Հաճախ աջակցության այս մոտեցումն առավել մատչելի է լինում ֆինանսական տեսանկյունից:

☞ Էկլեկտիկ թիմային մոտցում

Այս մոտեցման մեջ թիմի տարբեր մասնագիտություններ ունեցող անդամներն օգտագործում են իրենց բազմակողմանի գիտելիքներն ու հմտությունները՝ առաջարկելով տարբեր լուծումներ ու խնդրի լուծման եղանակներ: Գնաժամային միջամտության էկլեկտիկ մոտեցումը թույլ է տալիս աշխատել տարբեր առանձնահատկություններ ունեցող ընտանիքների հետ՝ անդրադառնալով ընտանիքի անդամների աֆֆեկտիվ (զգացմունքներ), կոգնիտիվ (մտածողություն) և վարքային (գործողություններ) պատերներին: